Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն ԹԻՎ 4

«ՇՄ ՆԿՀ-ԳՀԱՇՁԲ 2019/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գ. Նոր Կյանք 21.06.2019թ

Նիստին մասնակցում են՝ ժամը 12:00

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Սուքիասյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Հակոբյան

Գ. Պետրոսյան

Վ. Հովհաննիսյան

Յ.Բաղդասարյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ո. Ադամյան

«ՇՄ ՆԿՀ-ԳՀԱՇՁԲ 2019/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

(Ա. Սուքիասյան)

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված, առաջին տեղը զբաղեցրած մասնակցի վերաբերյալ համապատասխան տեղեկատվության քննարկման, Մասնակցի՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին չհամապատասխանելու, ներկայացրած հայտը մերժելու մասին.

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին:

Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ՝5, դեմ՝ 0:

1. Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված, առաջին տեղը զբաղեցրած մասնակցի վերաբերյալ համապատասխան տեղեկատվության քննարկման, Մասնակցի՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով

սահմանված պահանջներին չհամապատասխանելու, ներկայացրած հայտը մերժելու մասին.

(Ա. Սուքիասյան)

1. Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից այս պահի դրությամբ չի տրամադրվել տեղեկատվություն՝ «ԱՇՈՏ ԵՎ ՀԱՅԿ ԵՂԲԱՅՐՆԵՐ» ՍՊԸ-ի <<ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի մասով:

«17.06.2019թ.-ին գնահատող հանձնաժողովի քարտուղար Ո. Ադամյանը էլ. ծանուցման միջոցով ծանուցեց 1-ին տեղը զբաղեցրած մասնակցին հրավերով սահմանված ժամկետում և կարգով /3 աշխատանքային օրվա ընթացքում/ ներկայացնել ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը՝ norkyanqigp@mail.ru էլեկտրոնային հասցեին: Սահմանված ժամկետում մասնակիցը ներկայացրել է վերը նշված փաստաթղթերը, սակայն որոշակի անճշտություններով:
19.06.2019թ. հանձնաժողովը 1 աշխատանքային օրով կասեցրեց նիստը և հանձնաժողովի քարտուղարը մասնակցին ծանուցեց 1 աշխատանքային օրվա ընթացքում շտկել վերը նշված անհամապատասխանությունը:

Մասնակիցը սահմանված ժամկետում ներկայացրել է փաստաթղթերի շտկված տարբերակը, սակայն թերություններով, մասնավորապես՝ բացակայում է արևային էներգիայի ստացման համակարգի տեղադրման նմանատիպ աշխատանքների պայմանագրերի պատճենները, որը հանձնաժողովի անդամների կողմից քննարկվելու արդյունքում գնահատվեց հրավերի պայմանների չհամապատասխանող:

Հիմք ընդունելով վերոգրյալը, հանձնաժողովը որոշեց «ԱՇՈՏ ԵՎ ՀԱՅԿ ԵՂԲԱՅՐՆԵՐ» ՍՊ ընկերության մասնակցի որակավորման չափորոշիչները գնահատել անհամապատասխան «ՇՄ ՆԿՀ-ԳՀԱՇՁԲ 2019/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի պահանջներին և մերժել մասնակցի հայտը:

Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ՝5, դեմ՝ 0:

2.Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին:

(Ա. Սուքիասյան)

1. Հանձնաժողովը որոշեց հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից հաջորդաբար տեղեր զբաղեցրած «Ույուտ Սենտր»ՍՊԸ և «Դ.Ա.Ն.ՇԻՆ» ՍՊԸ ներկայացուցիչներին առաջարկված գների նվազեցման նպատակով հրավիրել բանակցությունների:

Նշված մասնակիցների հետ միաժամանակյա բանակցություններ վարելու նպատակով հաջորդ նիստը հրավիրել 26.06.2019թ. ժամը 11:00-ին:

Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ՝5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Ա. Սուքիասյան

_____ Ա. Հակոբյան

Անդամներ՝ _____ Գ. Պետրոսյան

_____ Վ. Հովհաննիսյան

_____ Յ. Բաղդասարյան

Քարտուղար՝ _____ Ռ. Ադամյան